սական զորքերին և մասնակցեց նրանց առաջխաղացման միջոցին տեղի ունեցած կռիվներին։

Ռուսական կառավարությունը մի քանի անգամ փորձ արավ, թեև միշտ տարտամ, ենթարկելու մահալական մելիքների իրավասությանը գյուղերի և գյուղախմբերի մասնավոր մելիքներին, նույնպես և թուրք կալվածատերերին և ձմեռանոցների առաջնորդներին, մյուս կողմից՝ որոշ չափով կալվածատերերից անկախ և ինքնավար դրություն ստեղծելու գյուղական համայնքների համար, սակայն այս փորձերը չէին ունենում դրական հետևանքներ։ Գավառը կառավարվում էր հիմնականում նախկին եղանակով։ Ճիշտ է՝ բազմաթիվ և բազմատեսակ տուրքերը, որ գյուղացիությունը վճարում էր խանական ռեժիմի օրով, կամ վերացվեցին, կամ վերածվեցին ավելի պարզ և որոշ ձևերի, սակայն թուրք բեկերի, բեկզադաների, աղալարների իրավունքները մնացին առաջվա պես խճճված, բազմաձև, խախուտ հիմնավորված, անորոշ։ Այս կացությունը բարդանում էր թե պարսկական պատերազմի բռնկումից առաջ և թե Թուրքմենչայի դաշնագրությունը կնքելուց հետո այն պատճառով, որ ռուսական կառավարությունը չափազանց զգուշությամբ էր մոտենում մահմեդական բնակչության ղեկավար շերտերի իրավունքներին, խարխափելով իր գործում նոր պետական պայմանների հետ այդ իրավունքները համաձայնեցնելու հարցում, երկյուղ կրելով իր դեմ գրգռելու այդ շերտերը, մանավանդ, որ պարսկասեր տրամադրություններով տակավին ապրողների թիվը նրանց մեջ քիչ չէր, ինչպես դա ակներև եղավ մանավանդ վերջին պատերազմի ընթացքում։ Կառավարությունը հետևելով խանական ժամանակների օրինակին՝ նույնիսկ շարունակում էր կալվածքներ բաժանել այն թուրք բեկերին և աղալարներին, որոնք ավելի էին ցուցաբերում իրենց հավատարմությունը։ Այսպիսով Զանգեզուրում թրքական հողատիրությունը ընդարձակվում էր, մեծ մասամբ ի հաշիվ արքունի հողերի, որովհետև ամեն կերպ խուսափում էին հայաբնակ հողերը մահմեդական կալվածատիրոջը ենթարկելուց։ Այդ հողատիրությունն ու հողօգտագործումը այդ երկու տասնամյակներում ավելի ամրապնդվում էր և իրավական հիմքի վրա հաստատվում նաև այն պատճառով, որ ձմեռանոցների առաջնորդները ցմահ անփոփոխ էին մնում և իրենց իրավունքներն անց էին կացնում ժառանգներին, չնայելով որ հաճախակի դեպքերում այդ իրավունքները խաների օրով շնորհված էին լինում նրանց միայն ժամանակավորապես և մեծ մասամբ ոչ իբրև ժառանգական արտոնություն։ Այսպիսով տարեցտարի հասունանում և ամրանում էր այն մտայնությունը, որ այդ հողերն իրենց անպայման սեփականությունն են։ Միաժամանակ նոր կառավարությունը չկարողացավ պահպանել իր հեղինակությունն այն բարձրության վրա, որ նա ձեռք էր բերել Անդրկովկասում հաստատման սկզբի տասնամյակներում։ Պրովինցիայի կոմենդանտի, գավառապետների և գասեդատելների շարքերում տեղ էին գրավում բազմաթիվ այնպիսի պաշտոնյաներ, որոնք ծաղրալի էին դարձնում ռուսական զակոն՝ օրենք բառերը։ Այսպես Սամադ-Սուլթանը, մի foչվor համայնքի առաջնորդ, երբ նրան վախեցնում էին կարանտինը խախտողների դեմ ուղղած զակոնով, իրավունք ուներ պատասխանելու, խփելով իր գրպանին. «Ես լավ գիտեմ ռուսական զակոնը, փառք Աստծու՝ նրանից բավական ունեմ իմ գրպանում»[10]։

---

[10] «Акты, собранные Кавказскою Археографическою комиссиею», т. VIII, № 215.